

Մոտավոր հանգերի առանձնահատկությունները Եղիշե Չարենցի քառյակներում

Նոանե Մարոյան

Հանգուցային բառեր. հայկական պոեզիա, արևելյան պոեզիա, բանաստեղծական կայուն ձև, ռուբայի, ռիթմ, հանգ

Նախաբան

Չարենցը հանդիսանում է այն բանաստեղծներից մեկը, որոնք հետաքրքրված են բանաստեղծական և տաղաչափական տարբեր ձևերով: Նա իր գրական զինանոցում ունի ինչպես եվրոպական (տրիոլետ, սոնետ), այնպես էլ արևելյան (բեյթ, քառյակ) բանաստեղծական կայուն ձևերով գրված բանաստեղծություններ: Չարենցը կարևորում է նաև հանազավորումների բազմազանությունը: Նա միևնույն բանաստեղծության մեջ միաժամանակ կարող է օգտագործել իզական, արական և մոտավոր հանգեր: Հողվածի նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել Չարենցի օգտագործած մոտավոր հանգերի առանձնահատկությունները, երևան բերել դրանց հետաքրքիր կողմերը:

Մոտավոր հանգերը՝ գրականագետների ուշադրության կենտրոնում

Բանաստեղծական ռիթմի կարևոր միավորներից է հանգը: Այն օգտագործվում է բանաստեղծների մեծ մասի կողմից և ուսումնասիրության նյութ դառնում գրականագետների համար: Ա. Իլյուշինը իր “Русское стихосложение” գրքում մի ամբողջ գլուխ է նվիրում հանգին¹: Գլուխը բաղկացած է 5 ենթագլխից (1. Общие сведения о рифме, 2. С рифмами и без них, 3. Фонические условности рифмы, 4. Внутренние рифмы и слоговые созвучия, 5. Грамматический фактор в характеристике рифмы): Երրորդ ենթագլխում Իլյուշինը հանգամանորեն խոսում է արական հանգերի մասին՝ շեշտը դնելով դրանք՝ ուժեղ և թույլ հանգերի տեսանկյունից վերլուծելու վրա: Ենթագլխում բազմաթիվ օրինակներ են բերվում ռուս բանաստեղծների գործերից: Գրականագետը ուշադրություն է դարձնում նաև հանգավորմանը մասնակցող բառերի հնչյունական կազմին, բացատրում տարբեր կամ իրար նման հնչյուններով կազմված վան-

¹ Տե՛ս А. А. Илюшин, Русское стихосложение, Москва, “Высшая школа”, 2004, Глава вторая. Рифмовка, стр. 77-106.

կեր ու բառեր ունեցող տողերի կապը: Ուժեղ և թույլ հանգերը ուսումնասիրելիս՝ Բյուշինը ցույց է տալիս հնչերանգով իրար մոտ կանգնած բառերի՝ հանգավորումը՝ օրինակներ բերելով Դերժավինից (сидя-дителя, службу-ношу), Պուշկինից (небеса-глаза, поляка-врага, пригвоздя-дителя, плоды-мачты), Գրիբոյեդովից (судьба-толпа, пути-вперед, то-Бордо) և այլ բանաստեղծներից²: Բյուշինի կողմից բերված օրինակները վերաբերում են թույլ հանգերին: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ սրանք ոչ թե մոտավոր, այլ ճշգրիտ հանգեր են: Նման կարծիք է հայտնում նաև Տումաշևսկին իր «Стилистика и стихосложение» գրքում, որտեղ ևս մեկ ամբողջ գլուխ կա նվիրված հանգերին: Գլուխը կոչվում է «Рифма» և կազմված է յոթ ենթագլխից (Вводные замечания, Классическая (точная) рифма, Приблизительная рифма, Неточная рифма, Рифмы богатые и бедные, Глагольная рифма, Развитие рифмы в России)³. «...կարևոր չէ, թե ինչպես են գրվում երկու տարբեր բառերը, այլ, որ դրանք հնչեն նույնանման»⁴: Գրականագետը նաև օրինակներ է բերում, որտեղ բառերը վերջավանկերում ունեն տարբեր տառեր, բայց արտասանելիս միանման են հնչում: Օրինակ՝ далёко-глубоко, клад-говорят, ночного-слово⁵: Տառերի միանման հնչելու առանձնահատկությունը միայն ռուսերենին բնորոշ երևույթ չէ:

Հետևություն

Խորապես ծանոթանալով ճշգրիտ և մոտավոր հանգերին, դրանց յուրահատկություններին՝ կարելի է միանշանակ պնդել, որ մոտավոր հանգը ավելի շատ առանձնահատկություններ ունի և ուսումնասիրությունների առավել լայն հնարավորություններ է տալիս: Հնուտ բանաստեղծների ձեռքին իրարից տարբեր հնչյունները, կողք կողքի դրվելով, ստեղծում են միանման հնչերանգ: Ճշգրիտ հանգերում նույն տառերի՝ միմյանց հետ հանդես գալու հետ համեմատած՝ մոտավոր հանգը իսկապես ավելի բազմազան և հետաքրքիր է դառնում:

² Նույն տեղում՝ էջ 94:

³ Տե՛ս Բ. В. Томашевский, *Стилистика и стихосложение*, Ленинград, 1959, стр. 406-437:

⁴ Նույն տեղում՝ էջ 408:

⁵ Նույն տեղում՝ էջ 408:

Տոմաշևսկու դրույթները

Վերոնշյալ առանձնահատկությունները ազդակ են հանդիսացել տարբեր գրականություններ և լեզուներ ներկայացնող բանաստեղծների համար՝ ստեղծել հանգավորման բազմազան ձևեր: Մրանից զերծ չէ նաև հայկական, մասնավորապես Չարենցի պոեզիան: Տարբեր տառեր միանման հնչողություն ունեն Չարենցի՝ «Ռուբայաթ» շարքի վեցերորդ քառյակում⁶:

VI

Անցնում է հոսում է, վարար է,

Ելնում է, սուզվում **անդադար**.

Մշտապես մեռնում է – ու հար է.

Մշտապես ու հար – **անկատար**:

Իրար նման հնչյունների օգտագործման հաշվին թույլ, ճշգրիտ հանգեր կան Չարենցի նաև այլ քառյակներում՝ **ոգի-մորմոքի-չոքի**, արտա**քի**-հա**գի**-ահա**գի**ն, **անտ**ե-բան**տ**ե-կաշկան**դ**ե: Նշված օրինակներում կապը ձայնեղ և խուլ բաղաձայնների միջև է:

Մտտավոր հանգերի մասին խոսելիս՝ Տոմաշևսկին դրանք բաժանում է երեք խմբի: Առաջին խմբում այն բառերն են որոնք կազմված են ինչ-որ չափով նման հնչողություն ունեցող ձայնավորներից, ինչպիսիք են «ը» և «է», «ու» և «ո» ձայնավորները: «Ը» և «է» ձայնավորների հանգավորումը ուղեկցվում է իզական հանգերով, որտեղ «է»-ն օժանդակ բայն է:

XIV

Անտառը թափում է իր սաղարթը,

Անտառում հատնում է ու վատնում.

Բայց նայի՛ր – ինչքա՛ն նա զվարթ է,

Ինչքան նո՛ր է – ու մի՛շտ անհատնում:

Երկրորդ խմբում Տոմաշևսկին անդրադառնում է այն բառերին, որոնք ունեն նույն բաղաձայնը, բայց մի բառում այն ավելի նուրբ է հնչում, իսկ մյուսում՝ ավելի կոպիտ: Հայերենում այս ձևը հստակ չի երևում, բայց բաղաձայններին որոշ չափով ավելի նուրբ հնչողություն է հաղորդում «յ» հնչյունը: Այդպիսի օրինակ կարող են լինել *երաժշտություն, ամբողջու-*

⁶ Այսուհետ բերված բոլոր քառյակները պատկանում են Չարենցին: Հոմեական թվերով համարակալված քառյակները «Ռուբայաթ» շարքից են, իսկ հայերեն տառերով համարակալվածները՝ «Ռուբայիներ»:

թյուն, հնչյուն բառերը, որոնք ավելի մեղմ են հնչում, քան թուլթ, թուլրմ, հնչուն բառերը:

Է

Ա՛խ, շռայլ է լինում ոգին – լոկ մի՛ անգամ իր կյանքում,
Երբ վառվելով, մոխրանալով՝ իր վախճանին է հանգում.
Լինում է միշտ դա լույս, անվիշտ և երջանիկ այն ժամին,
Երբ իր մահով՝ խինդով, ահով՝ ծնում է աստղ իր հանգում:

Երբորդ խմբում տեղ են գտել այն բառերը, որնք վերջանում են “յ” հնչյունով, ինչը հայերենում գոյություն չունի: Հայերենում սրա համար-ժեքը կարելի է համարել այն բառերը, որոնք վերջավանկում ունեն նույն ձայնավորը և որևէ բաղաձայն: Այդպիսի օրինակ կարող է լինել չէ-հնչեղ, ջրի-դրի, անէ-տէ:

IV

Նա հոսում է, ալիք առ ալիք,
Եվ ամեն վայրկյան – այն չէ՛.
Եվ ամեն մի վայրկյանը – հնչեղ
Ներկա է, անցյալ – ու գալիք:

Նշված օրինակներում «է» և «ե» տառերի վրա չպետք է կենտրոնանալ, որովհետև երկուսն էլ նույնկերպ են հնչում, իսկ տվյալ դեպքում կարևոր է միայն հնչողությունը:

Տոմաշևսկին անդրադառնում է նաև ոչ ճշգրիտ հանգին՝ ասոնանսին⁷: «Ասոնանսային հանգը մոտավոր, ոչ ճշգրիտ հանգ է: Ի տարբերություն ճշգրիտ հանգի, այստեղ սովորաբար կրկնվում է միայն տողավերջի ձայնավորը, իսկ բաղաձայն հնչյունները կարող են մոտավորապես նման լինել կամ առհասարակ չհամընկնել»⁸: Ոչ ճշգրիտ հանգը կարելի է դիտել մոտավոր հանգի համատեքստում՝ համարելով այն մոտավոր հանգի տեսակներից մեկը:

ԻԴ

Պատմությունը տվել է մեզ ուսուցիչներ երեք մեծ.
Մեկը – դեռ հին կապանքներում միտք ու ընթացք մեզ տվեց.
Մյուսն եկավ ու կործանեց կապանքները մեզ գեղող, –
Կերտում է կյանք նրանց հունով Ուսուցիչը մեր երբորդ:

⁷ Չփոթե՛լ ձայնավոր հնչյունների կուտակման՝ առձայնության հետ:

⁸ Էդ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, էջ 28:

Առաջին և երկրորդ տողերի վերջավանկի «մ» և «վ», ինչպես նաև երրորդ և չորրորդ տողերի վերջավանկերի «ղ» և «դ» հնչյունները ապահովում են ոչ ճշգրիտ հանգի ստադուսը:

ԻԱ

Վերջին անգամ պատմությունը, մի թռիչքով գեղեցիկ,
Մեր ձեռքերով փորձեց մի նոր մարդկային կյանք կառուցի,
Կրկի՛ն ահա հավաքվում են, որ արյունով ու հրով
Կյանքը հրեն ետ՝ դեպի հին օվկիանոսը սառույցի:

Քառյակը ունի a-a-b-a հանգավորում: Երկրորդ և երրորդ տողերի հանգը կազմվում է -ցի վանկի միջոցով: Առաջին տողը ունի ոչ թե -ցի, այլ -ցիկ վերջավանկ: Առաջին տողի վերջավանկի «կ» և չորրորդ տողի վերջավանկի «յ» բաղաձայնների առկայությունը այստեղ եական դեր չի կատարում, որովհետև առաջին՝ տողերը բաղկացած են արական հանգերից, և առաջին, երկրորդ, երրորդ տողերի վերջավանկի ձայնավորը նույնն է: Այս դեպքում հանգաստեղծման բեռը իրենց վրա են վերցնում ձայնավորները: Բաղաձայնները, հավաքվելով ձայնավորների շուրջը, երանգային փափախություն են բերում, ինչը այս դեպքում հանգավորման վրա ազդեցություն չունի: Նման դեպքում հանգավորումը որոշելը հեշտ է: Սակայն բանաստեղծական հանգերի բազմազանությունը և միաժամանակյա կիրառությունը կարող է դժվարություններ առաջացնել հանգավորման տեսակը որոշելիս: Երբեմն տարբեր տեսանկյուններից վերլուծելիս հանգում ենք նրան, որ բանաստեղծությունը միաժամանակ կարող է տեղավորվել հանգավորման մի քանի տեսակների մեջ:

Հետևություն

Տոմաշևսկին մոտավոր հանգերը երեք տեսակի է բաժանում.

1. Հանգավորվող բառերի վերջին վանկերի ձայնավորները միատեսակ են հնչում (հայերենում՝ *է-ը, ու-ո*),
2. Հանգավորվող բառերը ունեն նույն բաղաձայնը, որը մի բառում ունի ավելի նուրբ հնչողություն, քան մյուսում (հայերենում՝ / տառի առկայությունը հանգավորվող բառերից մեկի վերջին վանկում),
3. Հանգավորվող բառերը վերջանում են *՝* տառով (հայերենում՝ որևէ բաղաձայնով):

Իգական և մոտավոր հանգերը Չարենցի քառյակներում

Չարենցի շատ քառյակներում առկա են իգական հանգեր: Այստեղ հարկ է ուշադրություն հրավիրել Աբեղյանի կարծիքի վրա: «Հանգն սկսվում է վերջին շեշտված ձայնավորից, ուստի վերջին անշեշտ ձայնավորով միայն կարելի չէ հանգ կազմել. իրար հանգակից չեն, ինչպես դրել է Թումանյանը, «շողերը – ձորը», «մութը – Դեբեդը»: Դրանք նույնիսկ առձայնությո՞ւն չեն կազմում: Հանգերի համար պետք է լինեն՝ շողերը-գիշերը կամ ձորը-հորը, այսպես և՛ մութը-գութը կամ Դեբեդը-հետը: Այս դեպքում կկազմվեին մի շեշտված և մի անշեշտ ձայնավորներից երկավանկ հանգեր, որոնք կոչվում են իգական հանգեր»⁹: Աբեղյանի բերած օրինակներում գործ ունենք ճշգրիտ հանգերի հետ: Չարենցի մոտ իգական հանգերը գեղեցիկ ձևով միահյուսվում են մոտավոր հանգերին: «Ռուբայաթ» շարքի երրորդ քառյակի բոլոր տողերը կազմված են իգական հանգերից, որտեղ շեշտվող վանկերը ունեն նույն ձայնավորը.

Նա թե՛ կյանք է, թե՛ մահ.– ակնթարթը,

Անհատնում հատնում է, վառք է.–

Եվ այսպես՝ մշտատև է աշխարհքը.

Անդադար թարթում է – ու անթարթ է:

Առաջին և երրորդ տողերը վերջանում են «ը», իսկ երկրորդ և չորրորդ տողերը «է» ձայնավորներով: Այստեղ վերլուծությունը կատարվում է, այնպես, ինչպես նախորդ քառյակում: Միայն վերջին տառերին ուշադրություն դարձնելով՝ առանց երկար մտածելու կարելի է համարել, որ բանաստեղծությունը ունի a-b-a-b հանգավորում: Մենք սովյալ դեպքում գործ ունենք մոտավոր հանգերի հետ; Այսինքն՝ «ը» և «է» ձայնավորները շատ հեշտ կարող են հանգավորվել իրար հետ: Եթե դրան գումարենք այն, որ հանգերը իգական են, և շեշտվող վանկերում միայն «ա» ձայնավոր կա, ապա կասենք, որ քառյակը ունի a-a-a-a հանգավորում: Բայց սա էլ դեռ վերջնական լուծում չէ: Նման դեպքերի հանդիպելիս ուշադրության կենտրոնում պետք է լինեն ոչ միայն շեշտվող վանկերը և վերջավանկերը, այլ տողերի վերջին բառերը ամբողջությամբ: «Որքան շատ լինին շեշտված ձայնավորից հետո եկող նույն հնչյունները, այնքան ավելի զգալի կլինի հանգը: Ըստ այսմ ամենից ավելի զգալի են երկավանկ

⁹ Աբեղյան Մ., Երկեր, Ե հ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1971, էջ 361:

իզական հանգերը, որ բնականաբար կազմվում են առնվազն երեք հնչյունից...»¹⁰: Վերոնշյալ քառյակի առաջին և չորրորդ տողերը ավարտվում են «ակնթարթ» բառով հանգավորվելով իրար հետ «ը» և «է» ձայնավորների օգնությամբ: Երկրորդ և երրորդ տողերի վերջին բառերն են՝ վառք է, աշխարհքը: «Ռք» և «րք» բաղաձայնները, տեղ գրավելով «ա» և «ը»/«է» ձայնավորների միջև, այդ բառերը արտասանության տեսանկյունից էլ ավելի են իրար մոտեցնում: Այսպիսով՝ բանաստեղծությունը ունի ոչ թե a-b-a-b («ը»-ն «ը»-ի հետ և «է»-ն «է»-ի հետ հանգավորելիս) կամ a-a-a-a («ը» և «է» ձայնավորների՝ միմյանց հետ հանգավորվելու առանձնահատկությունը հաշվի առնելով), այլ a-b-b-a հանգավորում:

XXX

Ասում են՝ վիրխարի հերոս, հանճարեղ է եղել Իսքյանդարը.

Շարժել է, խառնել է իրար ազգեր ու ցեղեր Իսքյանդարը.

Բայց գիտե՛ս դու շարժումն ու ընթացքը և գիտես՝ չլիներ թե ընթացքը –
Աշխարհում և մի շուտ անգամ դժվար թե շեղեր Իսքյանդարը:

Այն, որ առաջին, երկրորդ և չորրորդ տողերը ունեն միննույն հանգը, կասկած չկա: Այստեղ պետք է որոշել երրորդ տողի հանգը: Նախ՝ նկատենք, որ բոլոր տողերը վերջանում են իզական հանգերով, ընդ որում երրորդ և մնացած տողերի նախավերջին և վերջին վանկերն ունեն «ա» և «ը» ձայնավորներ: Դարձյալ պետք է ուշադրություն դարձնել ամբողջական բառերին: «Ընթացքը» և «Իսքյանդարը» բառերը, եթե ուրիշ բանաստեղծության մեջ լինեին վերջին բառեր, ապա կկարողանային հանգավորվել իրար հետ: Բայց այստեղ նման բան լինել չի կարող, զուտ այն պատճառով, որ «Իսքյանդարը» բառը նույնությամբ կրկնվում է առաջին, երկրորդ և չորրորդ տողերում, ինչն էլ հնարավորությունից զրկում է բանաստեղծության հանգավորումը որոշել մոտավոր հանգի տեսանկյունից նայելով: Այդ քառյակը ունի a-a-b-a հանգավորում և տողերում միայն ճշգրիտ հանգեր են:

«Ռուբայիներ» և «Ռուբայաթ» շարքերը հանգերի տեսանկյունից ունեն որոշ տարբերություններ: «Ռուբայիներ» շարքում բացակայում են իզական հանգերը: «Ռուբայաթ» շարքում ավելի քան երեսուն քառյակներում կան իզական հանգեր: Ընդ որում նույն քառյակում կարող են հանդիպել և՛ իզական, և՛ արական հանգեր.

¹⁰ Նույն տեղում՝ էջ 362:

VII

Օ, իւմի՛ր, իւմի՛ր դու ազահ.

Օ, իւմի՛ր անդադար այս հասնումը.

Կորածը – իրեն նա գտնում է,

Եվ իր այդ գտնումով – չկա:

Հիշելով Տոմաշևսկու՝ մոտավոր հանգերի մասին երրորդ դրույթը և իգական հանգերում շեշտվող նույն ձայնավորների առկայությունը՝ կասենք, որ քառյակը ունի a-b-b-a հանգավորում: Այստեղ իգական հանգերը իրար հետ են հանգավորվում, արականները՝ իրար: Նման կերպ են հանգավորվում նաև շարքի VI, VIII, IX, XIII, XXVII, XXVIII քառյակները: Չարենցը, սակայն, այստեղ ևս հնարամտություն է ցուցաբերում և որոշ քառյակներում հանգավորում իգական և արական հանգերը.

XI

Վերցնում ես քարը – մտածում ես. a

«Հետքեր է կրում նա ջրի» – b

Բայց չէ՞ որ այդ նո՛յն վայրկյանին հենց a

Իմ վրա դու քո ձեռքը դրիր: b

Առաջին տողը ունի իգական հանգ, երրորդը՝ արական, և այս երկու տողերը միամյանց հետ են հանգավորվում: Հետաքրքրական է, որ իգական հանգը հանգավորմանը մասնակցում է ոչ թե շեշտվող, այլ վերջին՝ անշեշտ ձայնավորով: Իսկ բառավերջի «ս» և «նց» հնչյունները հնչերանգով նման են: Երկրորդ և չորրորդ տողերը «ջրի» և «դրիր» բառերի օգնությամբ են հանգավորվում Տոմաշևսկու երրորդ դրույթի համաձայն:

Մոտավոր հանգեր կան նաև ներքին հանգերում:

XXIV

Այդ կապիկը՝ ձեռքին հայելի – նա կարծում է՝ արդեն իմաստուն է.

Ժպտում է հայելուն նայելիս – նա կարծում է՝ արդեն իմաստուն է.

Ախ, նայեք՝ ինչպե՛ս է սեղմել նա փայլուն ապակու այդ կտորը.

Իր միրաժն է տեսել նա էլի – և կարծում է՝ արդեն իմաստուն է:

Քառյակի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հանգերը ստեղծում են a-a-b-a հանգավորում: Ներքին հանգերը կազմվում են «հայելի», «նայելիս», «նա էլի» բառերի շնորհիվ: Ներքին և արտաքին հանգավորումները, միշտ չէ, որ համընկնում են:

XXI

Դու քում ես հոնքերիդ **սուրմա** – դու անհո՛գ ես.

Ինչո՞ւ է տրտնջում **գուր նա** – դու անհո՛գ ես.

Ես գիտեմ թե՛ տրտունջը **նրա**, թե՛ քո այդ պայծառ խնդությունը.

Տո՛ւր դու ինձ մանկություն, **տուր մա՛հ**, – դու անհո՛գ ես:

Քառյակը ունի a-a-b-a հանգավորում: Ներքին հանգերը կազմվում են «սուրմա», «գուր նա», «նրա», «տուր մահ» բառերի միջոցով: Հաշվի առնելով մոտավոր հանգերի բոլոր առանձնահատկությունները՝ կասենք, որ ներքին հանգերի շնորհիվ առկա է a-a-a-a հանգավորում: Քանի որ «նրա» բառում կա գաղտնավանկի ը, իսկ մյուս բառերի նախորդ առաջին վանկերում ու ձայնավորն է, ապա այն տեղավորվում է նաև a-a-b-a հանգավորման մեջ, որովհետև ու ձայնավորը արտասանությունը արագացնում է, իսկ ը-ն թեթև դադար տալիս:

Եզրակացություն

Չարենցը տաղանդ ունի ոչ միայն ընտրված թեման յուրահատուկ ձևով ներկայացնելու, այլ նաև հանգեր ընտրելու: Բանաստեղծը իր հեղինակած մի քանի տասնյակ քառյակներում հանգերի ու հանգավորման տեսակների բազմազանություն է բերում՝ այդպիսով քառյակները դարձնելով հետաքրքիր և՛ ընթերցողի, և՛ վերլուծողի համար: Չարենցի քառյակներում իգական և արական հանգերը հանդես են գալիս մոտավոր և ճշգրիտ հանգերի հետ միահյուսված: Բանաստեղծական այս կարճ ձևի միջոցով Չարենցը կարողացել է նաև ցույց տալ, թե հայոց լեզուն որքան առաձգական է և ստեղծագործելու համար շռայլ հնարավորություն է տալիս հանգավորման տեսանկյունից:

Գրականություն

1. Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
2. Մ. Աբեղյան, Երկեր, Ե հատոր, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1971:
3. А. Илюшин, Русское стихосложение, Москва, “Высшая школа”, 2004.
4. Б. Томашевский, Стилистика и стихосложение, Ленинград, 1959.

Характеристики приблизительных рифм катренов Егише Чаренца

Нране Сароян

Резюме

Ключевые слова: армянская поэзия, восточная поэзия, твердая форма стиха, рубай, ритм, рифма

Цель статьи – анализировать те стихотворения Чаренца, которые он написал используя твердую форму стихов Востока. Катрен является одним из самых распространенных твердых форм поэзии, который интересовал многих великих поэтов, в том числе и Чаренца.

В результате мы заключили следующее: во первых, Чаренц не только использовал классические твердые формы поэзии, но и создавал новые рифмы, которые отличаются друг от друга (мужская рифма, женская рифма, приблизительная рифма). Приблизительная рифма это, когда в слогах поэты используют буквы, которые звучат похоже. Приблизительные рифмы есть во многих стихотворениях Чаренца.

Следующая важная черта это, как поэт выбирает слова. Поэт, выбирая слова, обращает внимание на ритмику и смысл. Это и есть черты, которые делают стихотворения Чаренца более интересными.

Characteristics of Near Rhymes of Eghishe Charents's Quatrains

Nrane Saroyan

Summary

Key words: *Armenian poetry, eastern poetry, fixed poetic forms, rubai, rhythm, rhyme*

The purpose of the article is to analyze those poems of Charents, that he wrote using eastern fixed forms of poetry. Sonnet is one of the most common fixed poetic forms that interested a lot of great poets including Charents.

As a result of the study, we concluded the following: first, that Charents not only used the classic fixed poetic forms, but also created a lot of new rhymes, that differ from one another (masculine rhyme, feminine rhyme, near rhyme). Poets make near rhymes using letters that sound similar in syllables.

The next important feature is the way the poet chooses words. The poet, while choosing the words, pays attention to both the rhythm and the meaning. These are the features that make Charents's poems magnificent.

Ներկայացվել է 15.04.2021 թ.

Գրախոսվել է 30.04.2021 թ.

Ընդունվել է տպագրության 17.05.2021 թ.